ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

13 ՀՈՒԼԻՍԻ
2023 թ.
№ 10 (1108)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանն ռեկտոր Սրբուհի ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ 2022-2023 ուսումնական տարվա շրջանավարտներին

Սիրելի շրջանավարտներ, շնորհավորում եմ Մեծ Լուսավորիչ Խաչատուր Աբովյանի անունը կրող բուհն ավարտելու առթիվ: Համալսարանն այս տարի նոր կյանք ճանապարհեց 1413 շրջանավարտի. ձեզնից յուրաքանչյուրի համար սա շատ կարևոր շրջափուլ է: Այստեղ են մեկտեղվում մասնագիտական երազանքները և ինքնուրույն ճանապարհ մուտք գործելու բաղձալի երազանքի հնարավորությունները: Դուք Ձեր մասնագիտական ուղին կապել եք Մանկավարժական համալսարանի հետ. այս ընթացքում փորձել իրագործել այն պատկերացումները, երազանքները, ձգտումներն ու ձեռքբերումները, որոնք ունեցել եք մասնագիտական տիրույթում:

Մաղթում եմ առողջ և երջանիկ կյանք, որ կարողանաք պայմանավորել մեր երկրի համար լավագույն ձեռքբերումները, փորձը, իսկ կրթության բարեփոխումների ճանապարհին՝ ներկայանաք մասնագիտական լավագույն լուծումներով և փորձառություններով:

Մանկավարժի մասնագիտությունը մշտապես պահանջված է եղել, իսկ Մանկավարժական համալսարանում սովորելը առավելություն՝ բոլոր ժամանակներում. ապագա մանկավարժը նախ դրսևորվում է ակադեմիական տիրույթում, ապա գիտելիքների, կարողությունների և հմտությունների մեծ փորձ կուտակում կրթական հաստատություններում:

Համալսարանը մասնագիտությունների լայն շրջանակ ունի: Վերանայված մասնագիտական կրթական ծրագրերը հնարավորություն են տալիս ընդլայնել կարողությունների շրջանակը և մեր ապագայի զարգացումն ուղղակիորեն ապահովող կրթական հաստատությունների համար կերտել օրվա հրամայականին համահունչ մասնագետ: Լիահույս ենք, որ կկարողանաք պատվով իրագործել մանկավարժական մայր բուհի առաքելությունը և բարձր պահել հարազատ կրթօջախի մեկդարյա բարի համբավն ու հեղինակությունը:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ Մանկավարժական համալսարանն ավարտելու առթիվ և մաղթում բարի երթ, մասնագիտական վերելքներ և ձեռքբերումներ:

Գիտական խորհրդի տարեվերջյան նիստում

Մանկավարժական համալսարանում հունիսի 30-ին տեղի ունեցավ տարեվերջյան Գիտական խորհրդի նիստը:

Մինչ օրակարգային հարցերին անցնելը ռեկտոր Սրբուհի Գևորգյանը շնորհավորեց համալսարանի հոբելյարներին՝ Համլետ Միքայելյանին, Լյուդմիլա Ավանեսյանին, Գագիկ Դեմիրխանյանին, Լիլիթ Սարվազյանին, Իրինա Մանուկյանին, Արթուր Մարտիրոսյանին, Արուսյակ Հովհաննիսյանին, Լևոն Գալստյանին:

Գիտաուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը Գիտական խորհրդի անդամների հաստատմանը ներկայացրեց գիտական կոչումների շնորհման թեկնածուներին, որոնք ընտրվեցին փակ գաղտնի քվեարկությամբ:

Շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին ընդհանրական հաղորդմամբ հանդես եկավ ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը: Նա թվերի վիճակագրությամբ, ըստ ֆակուլտետների, անդրադարձավ շրջանավարտների ավարտական արդյունքներին, նաև հանգամանորեն խոսեց քննական գործընթացում նկատված մի շարք թերությունների ու բացթողումների, ինչպես նաև քննական հանձնաժողովների նախագահների առաջարկությունների մասին:

Համալսարանի գործունեության ռազմավարական ծրագրի մասին հաղորդում տվեց Սամվել Ասատրյանը: Վերջինս ներկայացրեց բուհի ռազմավարության 10 ուղղությունները, ձևակերպված խնդիրներն ու նպատակները, որոնցում արտահայտված էին բուհի առաքելությունն ու տեսլականը:

Դասախոսների հարցերին պատասխանելիս ռեկտորը ներկայացրեց իր մտահոգությունները, որոնք առնչվում են Մանկավարժական համալսարանին:

«Ժամանակակից երեխաների ապրումակցման շեմը իջած է, իսկ առավել հաճախ այն բացակայում է: Մենք չենք կարողանում երեխայի կողքին լինել, որպեսզի ավելի դյուրին դարձնենք նրա սոցիալականացման ընթացքը: Մենք խնդիր ունենք վերանայելու մանկավարժական բոլոր կրթական ծրագրերը, ակադեմիական գիտելիքները շատ կարևոր են, բայց պետք է հասկանալ, թե ինչ է պետք 21-րդ դարի երեխային»,-մասնավորապես ասաց նա:

Ռեկտոր Սրբուհի Գևորգյանը փաստեց՝ բոլոր ուժերը և ջանքերը պետք է ուղղված լինեն Մանկավարժական համալսարանի առաքելությանը:

Լսեցին նաև ընթացիկ հարցեր:

Յուրաքանչյուր ոք, ով հիշում է իր կրթությունը, հիշում է ուսուցիչներին, ոչ թե մեթոդները և տեխնիկան:
Ուսուցիչը կրթական համակարգի սիրտն է:

Սիդնի Հուք

Որակյալ բարձրագույն կրթության ապահովումը ամենակարևոր բաներից մեկն է, որ մենք կարող ենք անել ապագա սերունդների համար:

Ռոն Լուիս





Համահայկական գիտակրթական համաժողով

Մանկավարժական համալսարանում անցկացվեց «EDUARMENIA 2023. ներառական կրթություն» համահայկական գիտակրթական աշխատաժողով: Պետական և հասարակական մի շարք կազմակերպությունների նախաձեռնությամբ անցկացվող աշխատաժողովը նվիրված էր կրթական հիմնախնդիրներին, որի համատեքստում անդրադարձ արվեց ներառական կրթության մարտահրավերներին ու ձեռքբերումներին:

Նախապես առցանց ձևաչափով մեկնարկած աշխատաժողովին մասնակցել էին տարբեր կառույցների ներկայացուցիչներ, շուրջ 1600 ուսուցիչներ:

Ինչպես նշեցին կազմակերպիչները՝ այս տարի համաժողովի ուղերձը համագործակցությունն ու արժեհամակարգի ձևավորումն է:

«ԿԶՆԱԿ» հիմնադրամի կրթական նորարարությունների և հետազոտության վարչության պետ Լիլիթ Մկրտչյանը վստահեցրեց. «Աշխատաժողովն այն միջավայրն է, ուր հանդիպում են բոլորը՝ աշակերտները, դասավանդողները, կրթության կառավարողներն ու կազմակերպիչները, նորարար գործիք ստեղծողները, և որ մասնակիցներից յուրաքանչյուրն իր հետ կտանի գաղափարների այնպիսի բազմություն, որը հիմք կդառնա նորը ստեղծելու համար»:

Ողջունելով գիտակրթական համաժողովի մասնակիցներին՝ ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը կարևորեց համաժողովի օրակարգում դրված խնդիրները: Ռեկտորը հույս հայտնեց, որ օրակարգը թույլ կտա լսել մասնագիտական հանրույթի կարծիքն ու առաջ ընթանալ:

Ռեկտորը մասնավորապես նշեց. «Փոխակերպվող աշխարհը մեզ հարցեր է ուղղում մարդու արժեհամակարգի փոփոխության, հուզականության, մարդու՝ մարդու նկատմամբ փոխներգործելու վերաբերյալ: Բոլորս, սակայն, մեկ բացթողում ունենք, երբ չենք փորձում ըմբռնել՝ ո՞վ է այդ փոփոխված երեխան. փոխակերպվող արժեքներն ու գիտելիքները հրահանգում են ստեղծել կոնկրետ միջավայր»:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը բարձր գնահատեց աշխատաժողովի անցկացումը, այն համարելով մի հարթակ, որը հնարավորություն է տալիս համախմբել երկրի մանկավարժական ներուժը և նախանշել կրթական համակարգի զարգացման ուղիները:

ԿԳՄՍ նախարարի տեղակալն անդրադարձավ առաջիկա ուսումնական տարվա բարեփոխումներին, մասնավորապես՝ դպրոցների կառավարման համակարգի փոփոխություններ, հանրակրթության չափորոշչի ներդրման գործընթաց, ինչպես նաև ուսուցիչների կարողությունների զարգացման բաղադրիչի ներդրում և այլն: Միաժամանակ խոսեց հանրակրթական հաստատություններում ուսուցիչների ներկայիս և սպասվող պակասի մասին և ներկայացրեց դրա վերաբերյալ պետական մի շարք ծրագրեր:

ՀՊՄՀ Աշխատակազմի և միջազգային հարցերով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանն անդրադարձավ կրթության ոլորտում առաջացած այն խնդիրներին, որոնք պայմանավորված են թվայնացված աշխարհով: Պրոռեկտորը կրթական համակարգում ոչ թե փոփոխությունների, այլև հեղափոխության կողմնակից է. պետք է տալ պահանջվածը, այն, ինչ ակնկալում է ժամանակակից երեխան, որը կարող է նրան մրցունակ դարձնել աշխարհում՝ բոլոր ոլորտներում:

Աշխատաժողովը շարունակվեց պլենար քննարկումներով, որոնցում կրթական գործի կազմակերպիչներն ու ներկայացուցիչները խոսեցին արդի աշխարհում ոլորտի հիմնախնդիրների և բացթողումների մասին, ինչպես նաև անդրադարձան ներառական կրթության մարտահրավերներին, ձեռքբերումներին և խոչընդոտներին:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

Հունիսի 27-29-ը Մանկավարժական համալսարանի Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի և հայկական սփյուռքի միակ բարձրագույն ուսումնական հաստատության՝ Հայկազյան համալսարանի Սփյուռքի ուսումնասիրության կենտրոնի նախաձեռնությամբ Բեյրութում տեղի ունեցավ «Հայության տեղաշարժերը և հասարակական-քաղաքական փոխակերպումները 1900-2020 թվականներին» խորագրով միջազգային երկրորդ գիտաժողովը:

Ուղիղ մեկ տարի առաջ Երևանում Հայկազյան համալսարանի և Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի համատեղ նախաձեռնությամբ տեղի էր ունեցել նույն խորագրով միջազգային առաջին գիտաժողովը Երևանում, որն իր գիտական բարձր մակարդակով անմիջապես գրավել էր մասնագիտական շրջանակների ուշադրությունը: Հայության տեղաշարժերով պայմանավորված՝ հասարակական-քաղաքական փոխակերպումները գնալով ավելի են հետաքրքրում գիտական լայն շրջանակներին:

Այս անգամ էլ Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում, Հայկազյան համալսարանի հյուրընկալ պատերի ներքո, հավաքվել էին ավելի քան երկու տասնյակ գիտնականներ՝ պատմաբաններ, քաղաքագետներ, թուրքագետներ, բանասերներ, մանկավարժներ և հումանիտար ուղղության տարբեր մասնագետներ, Հայաստանից և հայկական սփյուռքի զանազան գիտակրթական հաստատություններից, ինչպես նաև Արցախից: Ցավոք, հայտնի պատճառներով, Արցախի ներկայացուցիչը հանդես եկավ առցանց ձևաչափով:

Մանկավարժական համալսարանից գիտաժողովին մասնակցում էին Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Էդգար Հովհաննիսյանը, Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանը և ՀՊՄՀ ռեկտորի խորհրդական, Մանկավարժության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Հակոբ Թադևոսյանը:

ՀՊՄՀ և Հայկազյան համալսարանի միջև համագործակցությունը շարունակաբար խորանում է, և այս համատեղ գիտաժողովների կազմակերպումը երկու համալսարանների միջև ստորագրված համագործակցության պայմանագրի արդյունավետ իրագործման դրսևորումն է: Գիտաժողովի արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց նաև նույն խորագրով երրորդ գիտաժողովի կազմակերպման և գիտաժողովի նյութերի հրատարակության վերաբերյալ:

Հայաստանից ժամանած գիտաժողովի մասնակիցները ճանաչողական այցեր կատարեցին նաև Լիբանանում գործող հայկական մի շարք հոգևոր-կրոնական և կրթական հաստատություններ:

Ռուս գործընկերության շրջանակում

Մանկավարժական համալսարանում հունիսի 6-ին հյուրընկալվել էր Ստավրոպոլի պետական մանկավարժական համալսարանի պատվիրակությունը՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, Գիտահետազոտական աշխատանքների և նորարարությունների հարցերով պրոռեկտոր Մաքսիմ Կուլեշինինը և պրոֆեսոր, նախագծի ղեկավար Ալեքսանդր Ֆոկինը:

Ռուս գործընկերներն աշխատանքային հանդիպում ունեցան ՀՊՄՀ Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանի և Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Նաիրա Դալյանի հետ:

Կողմերը հանդիպման ընթացքում քննարկեցին ՌԴ լուսավորության նախարարության՝ ՀՀ-ում ռուսերենով բաց կրթության կենտրոնների ցանցի ստեղծման և զարգացման ծրագրի վերաբերյալ մանրամասներ, որը կյանքի է կոչվել երկու բուհերի համագործակցության շրջանակներում:

Մաքսիմ Կուլեշինինը ներկայացրեց բաց կրթության և ռուսերենի ուսուցման կենտրոնների գործունեության ուսումնամեթոդական և կադրային ապահովման վերլուծության, ռուսաց լեզվով դասավանդման ինտենսիվ նախագծերի մշակման, ուսումնամեթոդական խորհրդատվության տրամադրման և ճանապարհային քարտեզի մշակման ուղիները:

Հանդիպման ընթացքում կողմերը հանգամանորեն քննարկեցին նաև ՀՀ-ում ռուսերենով բաց կրթության կենտրոնների աշխատակիցների որակավորման բարձրացման դասընթացների, ՀՀ կրթական համակարգի ուսումնական հաստատությունների 100 ուսանողի ռուսաց լեզվի թեստավորման, «Ռուսաց լեզվի լավագույն ուսուցիչ-2023» մրցույթի, «Ամառային դպրոց» ծրագրի կազմակերպման և անցկացման, ինչպես նաև ներառական կրթության ոլորտում համագործակցության հետագա գործընթացը:

Մարիամ Իսպիրյանը վստահ է՝ վերջնարդյունքը երկուստեք կլինի գոհացուցիչ և արդյունավետ կրթական երկու հաստատությունների համար:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

Քննարկեցին շախմատի զարգացման ռազմավարական ուղղությունները

Մանկավարժական համալսարանի Շախմատի գիտահետազոտական ինստիտուտում հերթական հանդիպումն էր կազմակերպվել, որտեղ քննարկեցին շախմատի զարգացման ռազմավարական ուղղությունները:

Ծրագրի համակարգող Վահան Սարգսյանը ներկայացրեց Շախմատի գիտահետազոտական ինստիտուտի թիմի հաջողությունները, հանգամանորեն խոսեց մարտահրավերների մասին, միաժամանակ ինքնագնահատման ձևաչափում անդրադարձավ աշխատանքի թույլ կողմերին:

Նա ներկայացրեց Շախմատի գիտահետազոտական ինստիտուտի աշխատանքի զարգացման ռազմավարական ուղղությունները՝ այդ համատեքստում անդրադառնալով մի շարք անհրաժեշտ քայլերի շարունակական իրականացմանը, այն է՝ շախմատի ուսուցումը աուտիզմով երեխաների հետ աշխատանքում, սովորողների ուսումնական դժվարությունների պատճառականության բացահայտում և հաղթահարում, ուսուցիչների նասնագիտական կարողունակության սոցիալ-հոգեբանական հետազոտություն, շախմատի ուսուցման համագործակցային խաղերի մշակում, շախմատի և մի շարք այլ առարկաների փոխազդեցության սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություններ, շախմատը ռազմական ուսումնական հաստատություններում և քրեակատարողական հիմնարկներում և այլն:

Խոսելով տարբեր հետազոտական ուղղություններով աշխատանքների մասին՝ Վ. Սարգսյանն ընդգծեց նաև գերզարգացած գործիքակազմի ձեռքբերման և ֆինանսական ներդրումների անհրաժեշտության մասին հարցը:

Ներկաները մասնագիտական քննարկումներ արեցին՝ ըստ ոլորտների ներկայացնելով տարբեր ուղղություններով կատարված և կատարվելիք աշխատանքը, եզրակացնելով՝ ամեն դեպքում պետք է գտնել առանցքը, տարբեր ոլորտներում միավորել ջանքերը, որպեսզի արդյունքներն առավել նկատելի լինեն, անհրաժեշտ է որակական հետազոտությունների վերլուծության գործիք ձեռք բերել:

Համալսարանի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը հանդես եկավ իրատեսական մոտեցումներով առ այն, որ այսօր համայն աշխարհը խոսում է կրթության ճգնաժամի մասին, ընդգծեց՝ փոխվել է մանկության սոցիալականացման դերային խաղը, և որ մեծերը դուրս են եկել երեխայի հոգեբանական զարգացման տիրույթից՝ նրանց թողնելով տեխնոլոգիայի տիրույթում: Ռեկտորը բարձրաձայնեց իր մտահոգությունները՝ պետք են ծրագրեր, որոնք ուղղված կլինեն միջին հայ երեխայի սոցիալական զարգացմանը: Իսկ համալսարանն, իհարկե, կներկայացնի գործիքակազմ՝ նման խնդիրների լուծման համար:

Նիստը վարող Սմբատ Լպուտյանը լսեց ներկաների կարծիքները՝ դրանք հանգամանորեն ու համապարփակ վերլուծության ենթարկելու և առաջնահերթ խնդիրներին համատեղ ելքեր ու լուծումներ գտնելու հստակ մտայնությամբ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Յուլիսի 8-ը Ակսել Բակունցի եղերական ապանութեան օրն է

ԲԱԿՈՒՆՑԻ ՅԻՇԱՏԱԿԸ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՈՒ ԱՐԺԵՒՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Խ. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի Վ. Պարտիզունու անուան հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, Պրոֆեսոր Սուրէն Դանիէլեանի նախաձեռնութեամբ ամբիոնի անդամները եւ բանասիրական բաժանմունքի դեկան, Պրոֆեսոր Աշոտ Գալստեանը այցելեցին Բակունցի տուն-թանգարան: Պատուիրակութեան անդամներին դիմաւորեցին թանգարանի տնօրէն Վարդան Սարգսեանն ու աւագ գիտաշխատող, բ.գ.թ., դոցենտ Թեհմինա Մարութեանը:

Հիւրերը շրջեցին թանգարանի սրահներում, լսեցին Բակունցի կեանքի ու ստեղծագործական ծանօթ ու անծանօթ էջերին առընչուող դրուագների մասին: Այնուհետեւ Թեհմինա Մարութեանը ներկայացրեց «Բակունցի ճակատագրի բացայայտման հետքերով. ընտանեկան փաստաթղթեր (1945-1956 թթ.)» խորագրով ցուցադրութեանը վերաբերող տասնեակ վաւերագրեր:

«Սիւնեաց երկիր» թերթի գլխաւոր խմբագիր Սամուէլ Ալեքսանեանի նախաձեռնութեամբ կազմակերպուած կլոր սեղան-քննարկումը վերաբերում էր ազգային ինքնութեանը, հայերէնի պահպանմանը, արեւմտահայերէնի եւ արեւմտահայ մշակութային արժէքների իւրացմանը, ժամանակակից գրականութեան եւ գրականագիտութեան հարցերին, դպրոցական ծրագրերին, դասագրքերին: Քննարկման մասնակից մտաւորականների թւում էր Հայաստանի գրողների միութեան Սիւնիքի բաժանմունքի ղեկավար Լեւոն Սահակեանը:

Հաճելի անակնկալ էր Սիսիանի Դարբաս գիւղի դպրոցի՝ թանգարան այցելած ուսուցիչների եւ աշակերտների հետ երկխօսութիւնը:

Գաղտնիք չէ, որ մարզային գրադարանները ոչ միշտ են համալրւում անհրաժեշտ գրականութեամբ, ուստի մանկավարժական համալսարանի «Սփիւռք» գիտաուսումնական կենտրոնի անունից Սփիւռքի գրամշակութային դաշտին վերաբերող գեղարուեստական եւ գիտական 15 անուն գիրք նուիրաբերուեց թանգարանի գրադարանին: Սիւնեցիներն էլ իրենց գրքերից նուիրեցին:

Օրուայ աւարտին արդէն շահեկան հանդիպում տեղի ունեցաւ Գորիս եւ Քաջարան համայնքների ղեկավարներ Առուշ Առուշանեանի եւ Մանուէլ Փարամազեանի հետ, որի ընթացքում խօսք բացուեց Սիւնիքի դիմագրաւած դժուարութիւնների, մարզի գրամշակութային առօրեայի ու հեռանկարների շուրջ:

Ուխտագնացութեան մասնակիցները յաջորդ օրը այցելեցին Գորիսի երկրագիտական թանգարան, թանգարանի գիտաշխատող Վարդան Սարգսեանի բացատրութեամբ ծանօթացան եզակի ցուցանմուշների հետ, շրջեցին քաղաքի կենտրոնում, եղան քարանձաւներում եւ Խնձորեսկում:

Եկող տարի լրանում է Ակսէլ Բակունցի ծննդեան յոբելենական 125 ամեակը, որին պետական մակարդակով պատշաճ պատրաստուելու եւ նշելու ուղիների շուրջ երկու կողմերը փորձեցին համատեղ ծրագրեր ուրուագծել, որտեղ շեշտադրուեց մանկավարժական համալսարանի ղեկավարութեան պատրաստակամութիւնը, ինչպէս իր խօսքում նշեց պատուիրակութեան ղեկավար Սուրէն Դանիէլեանը:

Բակունցեան հիւրընկալ յարկի տակ հաւաքուածները շեշտում են՝ նմանօրինակ այցերը հարստացնում են երկուստեք. մարզում սպասում են մայրաքաղաքից եկող մտաւորականների, իսկ Երեւանում ապրողները կարիք ունեն յաճախակի հաղորդակից դառնալ մեր հայրենիքի դարպաս Սիւնեաց աշխարհի ոգեղէն լիցքին:

Արդէն Կիրակի ուշ երեկոյեան մանկավարժականցիները շնորհակալութեամբ հրաժեշտ տուեցին Գորիսին ու գորիսցիներին եւ հարուստ տպաւորութիւններով վերադարձան Երեւան:

Քնարիկ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, «Սփիւռք» գիտաուսումնական կենտրոնի գիտական աշխատող

Ավարտական հիշարժան օրեր Մանկավարժականում

Օտար լեզուների ֆակուլտետ

Հունիսի 30-ին զոհված աբովյանականների հիշատակը հավերժացնող հուշաքարի մոտ Մանկավարժական համալսարանի Օտար լեզուների ֆակուլտետի շրջանավարտները ստացան իրենց ավարտական վկայականները: Ֆակուլտետն այս տարի ունի 79 շրջանավարտ՝ երեք մասնագիտությունների գծով, որոնցից 17-ը ստացավ գերազանցության վկայական:

Շրջանավարտներին շնորհավորեցին դեկանը և ամբիոնների վարիչները՝ նրանց մաղթելով մասնագիտական հետագա ձեռքբերումներ:

Օտար լեզուների ֆակուլտետի դեկան Տիգրան Միքայելյանը վստահ է՝ ի դեմս ֆակուլտետի շրջանավարտների՝ մեր երկիրը կունենա լավագույն ուսուցիչներին: Նա խորհրդանշական և կրկնակի պարտավորեցնող համարեց զոհված համալսարանականների հուշաքարի մոտ վկայականների հանձնումը:

«Երկիրը կրթությամբ պետք է զարգացնել, և դուք կարող ուժ եք մեր երկրի ու կրթական համակարգի զարգացման գործում: Վստահ եմ, որ կկարողանաք Ձեր կարողություններով հարստացնել այստեղ ձեռք բերած գիտելիքները, մեր հաջողությունները հարստացնելով նոր բաղադրիչով և բովանդակությամբ»,-ընդգծեց Տիգրան Միքայելյանը:

Շրջանավարտներին բարի երթ մաղթեցին՝ հույսով, որ նրանցից շատերն իրենց կրթությունը կշարունակեն ՀՊՄՀ մագիստրատուրայում:

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետ

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի շրջանավարտներին դիպլոմներ հանձնեցին հուլիսի 3-ին: Դեկան Գագիկ Դեմիրխանյանը շնորհավորեց նրանց կյանքի կարևոր շրջափուլի ավարտի կապակցությամբ՝ ասելով. «Առանց կրթության որևէ պետություն չի կարող գոյություն ունենալ, իսկ առանց բնագիտական կրթության չի կարող լինել ուժեղ պետություն»:

Գիտական գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցը շրջանավարտներին հորդորեց՝ ձեր կարողություններով աշխատեք ապացուցել, որ արժանի եք լինել Մանկավարժական համալսարանի շրջանավարտները:

Դեկանը և գիտական գրադարանի տնօրենը դիպլոմների հետ նաև Խաչատուր

Աբովյանի գործունեությանը և Ալբերտ Էյնշտեյնի հարաբերական տեսությանը վերաբերող խորհրդանշական գրքույկներ նվիրեցին շրջանավարտներին՝ մաղթելով երջանկություն և հաջողություններ:

Հավելենք, որ այս տարի ֆակուլտետն ուներ 140 շրջանավարտ, որից 34-ն ավարտեց գերազանցության դիպլոմով:

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետ

«Այսօր շատ հուզումնալից օր է ձեզ համար, սիրելի՛ շրջանավարտներ. դուք մանկավարժի առաքելությամբ մտնելու եք դպրոց, իսկ այդ առաքելությունն ավելի քան պատասխանատու է և պատվաբեր: Որովհետև ձեր ձեռքերում է երկրի, ազգի, ժողովրդի ապագան, կախված նրանից, թե ինչպիսի սերունդ կկրթեք, այդպիսին կլինի մեր երկրի ապագան:

Հաջողակ եղեք, ապրեք և արարեք երջանիկ երկրում»,-ասաց ֆակուլտետի դեկան, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուզաննա Սադոյանը:

Շրջանավարտներին շնորհավորեցին ամբիոնների վարիչներ՝ կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Պիպոյանը և կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Սիրինե Շողերյանը, ապա հանդիսավորությամբ տրվեցին շրջանավարտների դիպլոմները:

Այս տարի ֆակուլտետն ավարտեց 75 շրջանավարտ, որից 15-ը՝ գերազանցությամբ:

Սկզբնական կրթության ֆակուլտետ

Սկզբնական կրթության ֆակուլտետում հանդիսավորությամբ ճանապարհեցին շրջանավարտներին: Ֆակուլտետն այս տարի ավարտեց 184 շրջանավարտ, որից 35-ը՝ գերազանցության դիպլոմով:

«Ինչպես կուզեի մեր շրջանավարտների տարիքում լինել,-ասաց դեկան Հեղինե Խաչատրյանը:-Ձեր առաջ բացվելու են հրաշալի, խորհրդավոր կյանքի դռները, և դուք, կարծում եմ, ճիշտ ընտրություն կկատարեք»:

Դեկանը շրջանավարտներին հիշեցրեց. «Այս կյանքում հաջողությունը, հարստությունը, փողը կարևոր բաներ են, բայց՝ անկայուն ու անցողիկ: Մնայունը գիտելիքն է: Հետևաբար, երբ այսօր կվերցնեք ձեր դիպլոմները, չփակեք գիտելիքի զարգացման ձեր ճանապարհը և դուռը, այս վկայականները ձեզ համար նոր գիտելիքների ձեռքբերման ճանապարհ ու խթան թող լինեն, և մշտապես զարգացրեք ձեր գիտելիքներն ու մասնագիտական կարողությունները: Մեզ մի մոռացեք, սիրով սպասում ենք ձեզ, մենք ձեր գործընկերներն ենք»:

Շրջանավարտներին շնորհավորեց ու բարի երթ մաղթեց անբիոնի վարիչ Ջուլիետա Գյուլամիրյանը. «Ձեզ համար սկսվում է նոր կյանք, սովորելու նոր փուլ: Ես ուզում եմ առաջին հերթին ձեզ փոխանցել մշտապես սովորելու ցանկությունը: Ամեն անգամ նոր սերունդ ճանապարհելիս ես հիշում եմ, թե ինչպիսին էին առաջին կուրսում: Ավարտական աշխատանքի ժամանակ այն արդյունքը, որ տեսնում ենք՝ ձեր ինքնուրույն խոսքը, ձեր համարձակությունը, ձեր ըմբոստությունը, մեզ իսկապես հպարտացնում է: Ուզում եմ բոլորիդ տեսնել երջանիկ ու ժպտերես»,-ամփոփեց մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ջուլիետա Գյուլամիրյանը:

Նախադպրոցական մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր Սվետլանա Մարութ-

յանն ասաց. «Տարիների ընթացքում դուք գիտելիքներ եք ձեռք բերել և գործնական հմտություններ ու կարողություններ: Դրանք ձեզ շատ են պետք: Բայց ես նաև շատ կարևորում եմ ապագա ուսուցչի մասնագիտական կարողությունները՝ համբերատարություն, մարդասիրություն, հայրենասիրություն, նպատակաուղղվածություն, համառություն: Այդ ամենով դուք ստեղծել եք ձեր կերպարը: Ես ուզում եմ՝ ձեր կերպարը լինի օրինակելի և կարողանաք ձեր ստացածը ճիշտ նպատակի ծառայեցնել»:

Պրոֆեսորը շրջանավարտներին մաղթեց ստեղծագործական մեծ հաջողություններ ու մասնագիտական վերելք, պայքարել և ձգտել հասնելու կատարյալին:

Շնորհավորելու էր եկել ֆակուլտետի նախկին շրջանավարտ Անահիտ Մանուկյանը: «Սա դեռ ձեր կրթության սկիզբն է: Տարիներ առաջ ավարտելով այս ֆակուլտետը՝ ես կարողացա արդեն ինքնուրույն զարգացնել գիտելիքներս: Դուք էլ սա համարեք մեկնարկ՝ ձեր ինքնակրթության համար: Ինչպես տարիներ առաջ ասում էր մեր դեկան Հեղինե Խաչատրյանը՝ ամենակարևոր ռեսուրսը գաղափարն է, իսկ գաղափարի համար շատ գիտելիքներ են պետք: Փորձեք ձեր կուտակած գիտելիքները օգտագործել նոր գաղափարների գեներացման համար և անպայման լավ արդյունքի կհասնեք»:

Հատուկ կրթության ֆակուլտետ

Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետն այս տարի ավարտեց 123 շրջանավարտ, որից 1-ը՝ երկտարեցի, իսկ գերազանցության դիպլոմքվ՝ 47 շրջանավարտ:

Շրջանավարտներին շնորհավորեց դեկան Գոհար Հովյանը: «Դուք ընտրել եք մի մասնագիտություն, որը շատ մարդասիրական է: Մանկավարժական համալսարանը ձեզ համար կյանքի ուղի է հարթել, և պատվով պիտի կրեք մանկավարժի բարձր կոչումը: Այսօր արագ փոփոխվող աշխարհն ընթանում է տեխնոլոգիաների ճանապարհով, և այդ տեխնոլոգիաները հաճախ ավելի կարևոր են դառնում մարդու կյանքում»,-ասաց դեկանը՝ շեշտադրելով այն փաստը, որ պակաս կարևոր չէ բժշկական ոլորտի մասնագետների՝ մանկավարժահոգեբանական ծառայություններ մատուցող մասնագետների, լոգոպեդների, հոգեբանների, սուրդոմանկավարժների, տիֆլոմանկավարժների առաքելությունը:

Դեկանը շրջանավարտներին մաղթեց հաջողություն այդ ծանր բնագավառում՝ ասելով, որ տեխնոլոգիաների մասնագետների սխալները չեն ներվում, բայց իրենց

թույլ տված յուրաքանչյուր սխալ կարող է շատ ավելի ծանր լինել. «Այս առումով եղեք եզակի, եղեք միակը այդ բարդ ոլորտում»:

Ավարտական դիպլոմներ հանձնելու պատիվը տրված էր ՀՀ ԿԳՄՍ փոխնախարար Արաքսիա Սվաջյանին, ով ևս ֆակուլտետի շրջանավարտ է:

Փոխնախարարը շնորհավորեց շրջանավարտներին բուհն ավարտելու կապակցությամբ և մաղթեց հետաքրքիր աշխատանքային գործունեություն, արդյունավետ ու բեղուն ընթացք, որը նրանց հնարավորություն կտա սեփական համակարգում բերել այն փոփոխությունները, որոնց իրականացման համար եկար տարիներ սովորել են Մանկավարժական համալսարանում:

Ա. Սվաջյանը փաստեց, որ համընդհանուր ներառական կրթությունը ներդրվում է կրթական բոլոր մակարդակներումգ դպրոցական մակարդակում այն արդեն ներդր-

վել է, անցյալ տարվանից էլ ներդրվել է նախադպրոցական հաստատություններում, հաջորդ տարվանից էլ ներդրվելու է նախնական և միջին մասնագիտական հաստատություններում:

«Դա նշանակում է, որ մեր բոլոր ուսումնական հաստատություններում սովորող ՀՀ քաղաքացիները ունենալու են ձեր կարիքը: Ցավոք, օրեցօր ավելանում է հաշմանդամություն ունեցող մարդկանց թիվը: Բայց ես վստահ եմ, որ այն գիտելիքներն ու կարողությունները, որ դուք ձեռք եք բերել այս հաստատությունում, ուղղված կլինեն ոչ միայն հաշմանդամություն ունեցող մարդանց, այլև առհասարակ յուրաքանչյուր հաստատությունում սովորող յուրաքանչյուր երեխային աջակցելու համար»,-հավելեց փոխնախարարը, ով նաև տեղեկացրեց, որ դպրոցում հոգեբանական անվտանգ միջավայր ունենալու համար մյուս տարվանից բոլոր դպրոցներում կներառվի հոգեբանի հաստիք:

Ավարտելով խոսքը՝ փոխնախարարը շրջանավարտներին մաղթեց իրենց գիտե-

լիքներն ու կարողությունները կիրառելու մեծ հնարավորություններ:

Շրջանավարտներին դիպլոմների հանձնեցին և բարեմաղթանքի խոսքեր հղեցին համալսարանի պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը, պրոֆեսոր Սպարտակ Փալիկյանը, ֆակուլտետի ամբիոնների վարիչները:

Հունիսի 6-ին տոնական տրամադրությունն էր թևածում Մանկավարժական համալսարանում: Շրջանավարտներին հանդիսավոր պայմաններում դիպլոմներ հանձնեցին և բարի երթ մաղթեցին նաև Գեղարվեստական կրթության, Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի, Բանասիրական ֆակուլտետներում:



Հաջորդ քայլը՝ մագիստրատուրա

Դեռ աշակերտական տարիներին «նախանձով» էի հետևում համալսարանական ավագ ընկերներիս, որոնք ակտիվորեն միջանկյալներին էին պատրաստվում, արշավներ ու էքսկուրսիաներ, տարաբնույթ միջոցառումներ, սեմինարներ ու ինտերակտիվ ժամանց կազմակերպում, կատակներ անում ու միմյանց հետ կիսում այստեղից բերած հիշողությունները: Հենակետային վարժարանում սովորելիս արդեն որոշել էի, որ կրթությունս, անկասկած, շարունակելու եմ Մանկավարժական համալսարանում: Այժմ կարող եմ հպարտորեն ասել, որ գերազանցությամբ ավարտեցի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը: Առաքելությունս որոշ չափով ավարտված է: Բակալավրի այս 4 տարիների ընթացքում արդեն հիշողություն դարձած հրաշալի պահեր եմ ունեցել: Համալսարանն ինձ ընձեռել և հիմա էլ ընձեռում է ինքնադրսևորվելու և կայանալու շատ ու շատ հնարավորություններ:

2019 թվականին լսելով «Շնորհավորում ենք, Դուք անցել եք լրագրություն բաժին» խոսքերն՝ արդեն գիտեի, որ ինձ դասավանդելու են ոլորտի լավագույն մասնագետները: Վստահ եմ, որ ստացել եմ անհրաժեշտ գիտելիքներն ապագայի լավ, պիտանի մասնագետ լինելու համար: Կարծում եմ, որ յուրաքանչյուրն, ով ցանկանում է կրթություն ստանալ, անկասկած գտնում է իր ուղին՝ անկախ նրանից՝ ավարտե՞լ է, թե ոչ որևէ համալսարան:

Իմ կուրսը նման չի եղել մյուս համալսարանների՝ անթիվ տասնյակով ուսանողներով կուրսերին: 9 աղջիկ և Գնել Նալբանդյան: Պարոն Նալբանդյանի շնորհիվ է, որ այժմ կարողանում ենք տարբերել կարևորն անկարևորից, անել «տնային աշխատանք»՝ յուրաքանչյուր թեմա պատրաստելիս օգտագործելով «կարող եմ», ոչ թե՝ «կարամ»:

«Ուսխորհրդականը նախկին չի լինում»: Այս խոսքերն անհիմն չեն: Հաջորդ ու կարևորագույն ձեռքբերումս ընկերներս են: «Մեղավորներից» մեկն Ուսանողական խորհուրդն է՝ կառույց, որն ընդամենը հաշված ժամերի ընթացքում դառնում է մշտական տուն: Ուսանողական լիարժեք տարիներ ունենալու և ինքնադրսևորվելու գործում Ուսանողական խորհուրդն իր ուրույն տեղն ունի, և անդամները նույնպես դա կփաստեն: Հենց այստեղ եմ լրագրության բաժնի պարզապես ուսանողից դարձել «լրատվականի ժենի», որն, անկեղծ ասած, բավականին պարտավորեցնող է: Ինքնակառավարվող մարմին, որը բացի ուսումնաճանաչողական ակտիվ ժամանց ապահովելուց, ուսանողի առաջին օգնականն է, կարծիքի հետ հաշվի նստողը և փորձի փոխանակում ապահովողը:

Գալով առաջին կուրս՝ չես էլ կարող պատկերացնել, որ այդ 4 տարիներն այդքան վայրկենական են անցնելու, ուստի անհրաժեշտ է օգտագործել բոլոր լծակները, ստանալ հնարավորինս շատ գիտելիքներ, գտնել կյանքի ընկերներին և երբեք չզլանալ որևէ նոր բան անել: Համալսարանը պարզապես մի քանի մասնաշենքերը չեն, դասախոսական կամ վարչական անձնակազմը չէ, գնահատական ստանալն, ուսումնական գործընթացի նյութերը չեն: Համալսարանն այն արժեքներն են, որոնք մենք՝ ուսանողներս ենք կերտում, կիրառում ու պահպանում: Եվ, իհարկե, ամենադժվարինը դրանք պահպանելն է:

Երիտասարդական ներուժի ներգրավմամբ

Հունիսի 30-ից հուլիսի 5-ը Ծաղկաձորում անցկացվեց երկու՝ ավագ և կրտսեր սերունդների համախմբան՝ «Ոսկե սերունդ» սոցիալ-կրթական ամառային ճամբարը, որի նախաձեռնությունը «Միասին» հասարակական կազմակերպությանն է: Ծրագրի նպատակն էր հասարակության ուշադրությունը բևեռել տարեցների հիմնախնդիրներին, ցուցաբերել սոցիալ-հոգեբանական աջակցություն, նպաստել նրանց օգտակար և հետաքրքիր առօրյայի կազմակերպմանը:

Նորարական ծրագրի առանձնահատկությունը երիտասարդական ներուժի ներգրավման մեջ էր. ճամբարի անմիջական դերակատարները հայաստանյան բուհերի և պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների (այդ թվում՝ մարզերի) բարձր կուրսերի երկու տասնյակ ուսանողներն էին, որոնք իրենց մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները կիրառեցին ծրագրի շրջանակներում:

Մանկավարժական համալսարանից ճամբարին մասնակցում էին Կուլտուրայի ֆակուլտետի «Լրագրություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Ժենյա Աբգարյանը և «Գեղարվեստական լուսանկարչություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Արփինե Կարապետյանը:

Ուսանողներն իրենց ստացած գիտելիքների շնորհիվ կարողացան լավագույնս դրսևորվել և լուսաբանել ճամբարային առօրյան:

Արփինեն անկեղծանում է՝ «Սկզբում կարծում էի, որ մեծահասակների հետ շփումը բարդ է լինելու, սակայն արդեն առաջին օրը հասկացա, որ իրենք մեզնից ավելի եռանդուն ու ոգևորված են»:

Ժենյա Աբգարյանն էլ նշում է. «Նմանօրինակ ծրագրերի շատ եմ մասնակցել, սակայն ավագ սերնդի հետ շփումն առաջին անգամ էր: Նաև այլ բուհերի ուսանողների հետ ձեռք ենք բերել այնպիսի ընկերական սերտ հարաբերություններ, որոնք, վստահ եմ, որ ամուր ենք պահելու»:

Ճամբարի ընթացքում տարեցների համար կազմակերպվել են ինտերակտիվ սեմինարներ հոգեբանական թեմաներով, բժշկական խորհրդատվություններ, ձեռագործության և երաժշտական դասեր, հոգևոր և մշակութային զրույցներ:

Այս ամենից զատ ծրագրի մասնակիցներն այցելեցին 11-13-րդ դարերում կառուցված Կեչառիսի վանական համալիր, ծանոթացան ստեղծման պատմությանը, վանքի առանձնահատկություններին, այնուհետև եղան Օրբելի եղբայրների տուն-թանգարանում, ծանոթացան նրանց կյանքի նշանակալից դրվագներին:

«Ճամբարի հանդիսավոր փակման արարողության ընթացքում ուսանողներն ավագ ընկերների հետ պարեցին «Կարնո քոչարի» և «Ծաղկաձորի» պարերը:

«Միասին» ՀԿ-ի նախագահ Գևորգ Չիչյանը շնորհակալություն հայտնեց մասնակիցներին և գիտելիքների փոխանցման և ցուցաբերած ակտիվ աշխատանքի համար:

Միջոցառման վերջում ծրագրում ներգրավված ուսանողներին հանձնվեցին հավաստագրեր:

Ժենյա ԱԲԳԱՐՅԱՆ

Վարպետ քայլերով

Երբ վերջապես իրականանում է անիրական թվացող նպատակդ, և քաղում ես տարիների ընթացքում կատարած աշխատանքիդ պտուղները, մի պահ կանգ ես առնում և հայացքդ ուղղում անցած ճանապարհի վրա: Մտովի հասնում ես սկիզբ և վերլուծում սխալներդ ու բացթողումներդ, համադրում ձեռքբերումներդ ու հաջողություններդ, և նոր ճանապարհի վրա ոտք դնելուց առաջ երկար հայացք ես գցում հնին՝ փորձելով բաց թողնել ուրախություն ու հիասթափություն, անկարողություն և, միաժամանակ, հպարտություն պարգևած այդ հինն ու թանկը:

Ոտք դնելով Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի դռներից ներս՝ զգաստանում ես մեծն մանկավարժի հայացքից, հասկանում ես պատասխանատվության աստիճանն ու անցնում առաքելությանդ:

Առաջին ամիսներին քեզ գրավում են հնչյուններն ու բառերը, գրքերն ու բառարանները, հոլովումն ու խոնարհումը, արմատն ու ածանցը, միջնադարն ու տաղերը, գրաբարն ու բարբառները: Փորձում ես հասկանալ՝ ինչ ասել է գրական սեռ, դրական կամ բացասական կերպար, բառաձև՞ն է կարևոր, թե՞ բառիմաստը, նախադասության ձևաբանական վերլուծությունն ինչ է, շարահյուսականը՝ ինչ, և վերջապես, ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը իրապես ճո՞ճք է թվում, թե՞ մենք ենք այդպես տենչում...

Հետո արդեն ստացածդ գիտելիքներն ու հմտությունները դպրոցում կիրառելու հերթն է գալիս: Քո առջև իր հյուրընկալ դռներն են բացում մայրաքաղաքի դպրոցներն ու օգնում կայանալ որպես ուսուցիչ: Ֆակուլտետ-դասախոս-դպրոց-մանկավարժ փորձառու շղթան տանում է քեզ ճանաչելու և բացահայտելու կյանքի մի նոր ու անբիծ հորիզոն: Հիացական հայացքներով ու հետաքրքրությունից լայն բացված աչքերով աշակերտներն անթարթ հետևում են ամեն խոսքիդ ու ժեստիդ՝ սպասելով, թե ինչով ես զարմացնելու իրենց:

Եվ միայն այդ պահին ես գիտակցում, որ մանկավարժների շարքը համալրելու հերթն արդեն քոնն է, և դու սխալվելու, վրիպելու իրավունք չունես:

Դպրոց... Այս աշխարհը բացառիկ է իր մաքրությամբ ու պարզությամբ: Այստեղ այլ իրականություն է, որտեղ չես կարող կեղծել, ստել, որովհետև ,դատավորներնե անաչառ ու անկեղծ երեխաներն են, որոնք մի անմեղ հարցով կարող են բացահայտել էությունդ:

Այսօր ես ստանձնեցի ուսուցչի վեհ կոչումը, որն ինձ շնորհեց ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետը: Այստեղ ինձնից կերտեցին այն բանասեր-մանկավարժին, որը սերունդներին իր ասելիքն ունի և իր «ձեռագիրն» է ցուցադրելու:

Ասելիք, որը ձևավորվեց բարձրակարգ ուսուցիչների հայացքի ներքո, որոնց երախտապարտ եմ լինելու գիտակցական ողջ կյանքիս ընթացքում:

Հրաժեշտը միշտ է տխուր և հուզիչ (հրաժեշտի թախիծը սիրո նշան է), սակայն այս հրաժեշտն ինձ համար նոր հնարավորության լուսավոր դարպաս է, որն անցնում եմ ուրախությամբ և հպարտությամբ: Ստանալով մանկավարժի բաղձալի որակավորումը՝ գնում եմ մագիստրոսի պատվավոր կոչման հետևից:

Ու կար ժամանակ, երբ անցնելով բանասիրական ֆակուլտետի շենքի կողքով, միայն երազում էի ու պատկերացնում, որ գուցե մի օր ես նույնպես հայտնվեմ հայոց Մանկավարժականում: Անսահման հավատը, ամուր կամքն ու մեծ սերն առ ոսկեղենիկ հայերենն ինձ մղեցին դեպի պայքար ու արժանավայել հաղթանակ:

Փայփայե՛ք բոլոր անիրական թվացող երազանքներն ու նպատակները: Ինքնավստահությունն ու կամքը, կրթվելն ու զարգանալը, սերն ու հարգանքը դարձրե՛ք Ձեզ ուղեկից և հասե՛ք ու գրավե՛ք բարձունքներ՝ օրինակ դառնալով շատերի համար:

Իմ հարազա՛տ ֆակուլտետ, հարգարժա՛ն դեկան և իմ սիրելի՛ դասախոսներ, շնորհակալ եմ ամեն խորհրդի, ամեն շտկված բառի ու ձևավորված ինքնատիպ մտահորիզոնի համար: Ձեզանից ստացած ու փայփայած կարողունակություններս ու հմտություններս, համեմելով այն անսահման ջերմության ու սիրո հետ, որն ինձ տվեցիք, ես՝ ընկեր Անտոնյանս, վստահ քայլերով գնում եմ սերունդներին դիմահար:

Անի ԱՆՏՈՆՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետի 2022-2023 ուստարվա շրջանավարտ

ՖՐԱՆՍԱՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐ

19-րդ դարի արևմտահայության մշակութային գլխավոր կենտրոնը Կոստանդնուպոլիսն էր: Սակայն, եթե Թիֆլիսում ազգային զարթոնքի պայմանները համեմատաբար բարեպատեհ էին, և տարբեր վայրերից այստեղ էին հաստատվում մասնագիտական կրթություն ստացած հայ նկարիչները, ապա թուրք բռնապետության պայմաններում Կոստանդնուպոլիսը վանում էր նկարիչներին, ինչը առանձնապես մեծ չափեր է ընդունել 19-րդ դարի վերջերից:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայ ժողովուրդն ապրեց իր պատմության ամենադաժան փորձությունը: 1892-1915 թթ. սուլթանական ու երիտթուրքական կառավարության ասպատակություններին զոհ դարձավ հայ ժողովրդի կեսից ավելին: Ամայացավ ամբողջ Արևմտյան Հայաստանը. Արդյունքում բազմաթիվ հայ արվեստագետներ բռնեցին գաղթի ճամփան: Նրանցից շատերը մեկնեցին Ֆրանսիա, որտեղ բարենպաստ պայմաններ կային ապրելու և ստեղծագործելու համար: Ֆրանսահայ կերպարվեստի զարգացման համար սա մի շրջան էր, երբ հայ նկարիչների ստեղծագործական լեզուն, առանց բացառության, մշակվեց ֆրանսիացի լավագույն վարպետների արվեստանոցներում:

Եվրոպական գեղագիտական մտքի նոր փայլատակումների առկայության, կյանք առնող նոր ուղղությունների ոլորտում ֆրասահայ կերպարվեստը հանգեց գունամտածողության սեփական ըմբռնումների ձևակերպանն ու հաստատմանը:

Ֆրանսահայ նկարիչները սկսեցին արդյունավետ օգտագործել գեղանկարչության ընձեռած հարուստ միջոցներն ու հնարավորությունները, լայնացրին իրենց գործունեության շրջանակները և հասան պրոֆեսիոնալ ազատության, ինչը նրանց ընձեռեց արդիականության գաղափարներն ու թեմաները ժամանակակից ձևերով վերարտադրելու նոր հնարավորություններ:

Ֆրանսահայ, ինչպես և ողջ սփյուռքահայ կերպարվեստի պատմությունը, ի վերջո, ամեն մի արվեստագետի կյանքի և ստեղծագործության պատմությունն է:

Ֆրանսիայում ստեղծագործած ամենավաղ շրջանի ծագումով հայ նկարիչը **Ժակ Ավետն է (1702-1766)**՝ 18-րդ դարի ֆրանսիական ռոկոկոյի դարաշրջանի դիմանկարի ժանրում ստեղծագործած լավագույն վարպետներից մեկը, ով նաև **Ժան Բատիստ Շարդենի** և **Ֆրանսուա Բուշեի** ուսուցիչն էր:

Ավետի առավել ռեալիստական մոտեցումն իր ժամանակի կերպարվեստի համատեքստում հեռու էր վաղ ֆրանսիական դիմանկարում առկա դիցաբանական **էլեմենտից**: Խորաթափանց դիմանկարչին հարիր կերպով նա ձգտել է իր կտավներում ի ցույց դնել ոչ թե պատկերվող անձի մեծավայելչությունը, այլ նրա բնավորությունը, հոգեկան և հոգևոր բնութագիրը. Մի սկզբունք, որը բխում է նկարչի սիրուց դեպի հոլանդական 17-րդ դարի գեղանկարչությունը, որն անհամեմատ ավելի ռեալիստական էր, քան տվյալ ժամանակաշրջանի ֆրանսիական կերպարվեստը: Նրա դիմանկարներում, որոնք հիանալի արտահայտում են 18-րդ դարի բարձր հասարակության վերնախավի ճաշակը, մշտապես առկա են ատրիբուտներ, որոնք մատնանշում են այն կենցաղը, որն անբաժան մասն է կազմում բնորդի մասնագիտության, լինի դա երաժշտական գործիք, գիրք, հետին պլանում նավամատույց, թե ներկապնակ:

Ֆրանսահայ նկարիչներից առանձնապես նշելի տեղ են զբաղեցնում շարդենյան տիպի նատյուրմորտների վարպետ **Զաքար Զաքարյանը (1849-1923)**, ծովանկարիչ **Արսեն Շաբանյանը (1864-1949)**, որի գործերում պատկերված մարդիկ ու բնությունը հաճախ տեղադրված են ակտիվ լուսաօդային միջավայրի մեջ:

Դարասկզբի խոշորագույն ծովանկարիչներից է **Վարդան Մախոխյանը (1869-1937)**, որի ստեղծագործական վաղ փուլն անցել է Գերմանիայում, ապա՝ Ֆրանսիայում և Միջերկրականի ափին: Նրա ծովապատկերները տրամադրության առումով ունեն ռոմանտիկական երանգավորում, իսկ որոշ դեպքերում էլ՝ հարևանցի աղերս սիմվոլիզմի հետ:

Ինչպես **Արսեն Շաբանյանը**, այնպես էլ **Վարդան Մախոխյանը** շփվել են **Հովհաննես Այվազովսկու** հետ և նրա արվեստից քաղել ներշնչանք ու ստեղծագործական ձևեր:

Հիմնականում բնանկարչությամբ էին զբաղվել նաև **Հրանդ Ալյանաքը (1880-1938)** և **Հրանտ Շաբանյանը (1888-1939)**, ով **Արսեն Շաբանյանի** որդին էր:

Ֆրանսահայ կերպարվեստում իր ուրույն տեղն է զբաղեցնում կենցաղանկարիչ **Լևոն Քյուրքճյանը (1872-1924)**, որի արվեստում ճշմարտացի արտացոլում են գտել հասարակ մարդկանց կյանքն ու կերպարները:

Իմպրեսիոնիզմին մոտ էր կանգնած Փարիզի գեղարվեստական շրջանակներում լայն ճանաչում վայելող բնանկարիչ և դիմանկարիչ **Կարապետ (Շարլ) Ադամյանը (1872-1947)**:

Առանձնակի ուշադրության է արժանի **Հովհաննես Ալխազյանի (1881-1958)** արվեստը, ում լուսեղ բնապատկերները հակված էին որոշ դեկորատիվության:

Դեկորատիվության հակումներն առավել ակնհայտ էին **Սարգիս Խաչատուրյանի (1886-1947)** գունեղ կտավներում, որոնցում դիմապատկերի ու բնապատկերի կողքին փաստական լուրջ արժեք են ներկայացնում ժողովրդական կյանքի, Մեծ եղեռնի ու գաղթի տեսարանները:

Ֆրանսահայ այնպիսի նկարիչներ, ինչպիսիք են **Գառզուն (Գառնիկ Զուլումյան) և Ժանսեմը (Հովհաննես Սեմերջյան)**, աշխատում էին նաև նկարաշարերով, որն առհասարակ բնորոշ է գրաֆիկային և հնարավորություն է տալիս առավել ամբողջական արտահայտել մտահղացումը:

Բովանդակալից և բազմիմաստ գրաֆիկական թերթեր ստեղծելու համար նրանք ձգտում էին գեղարվեստական արտահայտչամիջոցների և կոմպոզիցիոն լուծումների բազմազանության, ինչպես նաև կարողանում էին օգտվել օֆորտի տեխնիկայի ընձեռած բազմապիսի առանձնահատկություններից:

Նրանց օֆորտներում և գեղանկար ստեղծագործություններում զգալի տեղ են գրավում նաև մեր ժողովրդի ճակատագրի հետ կապված իրադարձություններն ու դեպքերը: Այս նկարիչների օֆորտներն աչքի են ընկնում գծի հիանալի ռելիեֆայնությամբ, էքիզային թեթևությամբ, գեղանկարչականությամբ, պլաստիկ մշակմամբ, ինչպես նաև ամուր և ռիթմիկ գծանկարով:

Սակայն ֆրանսահայ նկարիչների մեծամասնության անհայտ և մոռացված լինելը ժամանակակից առցանց աճուրդներում մշտապես հանգեցնում է սխալ ատրիբուցիոն գործընթացների, որոնց հետևանքով բազմաթիվ ֆրանսահայ նկարիչների կտավներ վերագրվում են լիովին այլ ֆրանսահայ նկարիչների վրձնին, ինչպես նաև սխալ են նշվում նրանց անուն, ազգանունը, ստորագրությունը, ծննդյան և մահվան թվերը, դարաշրջանը և այլն:

Այս պրոցեսների մեջ իր բացասական դերն է խաղում նաև այն հանգամանքը, որ մի շարք ֆրանսահայ նկարիչներ ստորագրել են իրենց անվամբ՝ **Chahnazar (Chahnazar Kouyoumdjian), Anahit (Anahit Astardjian), Bedo (Bedo/Bedros Konturadjian)**, անվան և ազգանվան առաջին մի քանի տառերի համակցմամբ՝**Armiss (Armenag Missirian)**, ազգանվան կեսով՝ **Gulbenk (Herand Gulbenkian)**:

Իրավիճակն էլ ավելի է բարդանում այն պատճառով, որ ժամանակակից առցանց աուկցիոնները կենտրոնացած չեն կոնկրետ ազգային պատկանելության նկարիչների կտավների վաճառքի վրա: Միևնույն աուկցիոնում կարելի է հանդիպել ամենատարբեր ազգային պատկանելության նկարիչների գործեր, որն էլ ատրիբուցիայի տեսանկյունից իր հերթին հանգեցնում է բազում սխալների, քանի որ հնարավոր չէ գտնել այնպիսի ատրիբուցիայի մասնագետի, ով կկարողանա փորձաքննության ենթարկել տարբեր ազգային պատկանելության նկարիչների կտավները:

Ճիշտ է, ուրախացնում է այն փաստը, որ որոշ ֆրանսահայ նկարիչների (**Հովհաննես Ալխազյան, Արսեն Շաբանյան, Սարգիս Տիրանյան, Էդգար Շահին**) գործեր կարելի է գտնել նույնիսկ *Christies* աճուրդի տանը, սակայն ֆրանսահայ նկարիչների մի հոծ զանգվածի մասին համացանցում չկա նույնիսկ որևէ կենսագրական ակնարկ: Նրանց մասին չկա ինֆորմացիա նույնիսկ **Wikipedia** կայքում:

Ճիշտ է, ֆրանսահայ նկարիչների մի ստվար հատված ծնվել է Օսմանյան կայսրությունում, սակայն առցանց աուկցիոններում հաճախ ֆրանսահայ նկարիչներին ներկայացնում են որպես **Turkish painter**:

Ֆրանսահայ նկարիչների կողմից դեռևս Օսմանյան կայսրությունում ապրած տարիներին ստեղծված բազում աշխատանքներ մինչ այսօր գտնվում են ներկայիս Թուրքիայում, որոնք մշտապես հանվում են վաճառքի թուրքական առցանց աճուրդներում, սակայն այնտեղ ստեղծված աշխատանքները հազվադեպ կարելի է հանդիպել նաև ֆրանսիական աուկցիոններում: Դրանք հիմնականում այն գործերն են, որոնք դեռևս 20-րդ դարի սկզբին ֆրանսահայ նկարիչներն իրենց հետ տարել են Ֆրանսիա՝ Օսմանյան կայսրությունը լքելիս:

Ցավոք, բազմաթիվ ֆրանսահայ նկարիչների աշխատանքներ, որոնք ցուցադրվել են 1910-1920-ական թթ. Փարիզի տարբեր ցուցասրահներում, դեռևս անհնար է գտնել առցանց աուկցիոններում, սակայն դա ընդամենը ժամանակի հարց է, քանի որ ամեն օր համացանցում հայտնվում են ֆրանսահայ նկարիչների նորանոր աշխատանքներ:

Աշոտ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու, ասիստենտ
Գեղարվեստական կրթության ֆակուլտետ
Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոն

Մասնակցեցինք Հյուսիս-Կովկասյան դաշնային համալսարանի «Ամառային դպրոց» ծրագրին

ՌԴ Գիտության և բարձրագույն կրթության նախարարության աջակցությամբ Ստավրոպոլի Հյուսիս-Կովկասյան դաշնային համալսարանում հուլիսի 3-7-ը կազմակերպվել էր միջազգային երիտասարդական ամառային դպրոց: Ամառային դպրոցի այս տարվա թեման էր՝ «Մեծ Կովկասը՝ որպես միջմշակութային երկխոսության և համագործակցության տարածք»:

Հայաստանի, Ռուսաստանի և Վրաստանի երիտասարդ գիտնականները բացառիկ հնարավորություն էին ստացել լսելու հայտնի կովկասագետ պատմաբանների և քաղաքագետների դասախոսությունները:

ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետից ես և 4-րդ կուրսի ուսանողուհի Նելլի Չոբանյանը նույնպես մասնակցում էինք «Ամառային դպրոց» ծրագրին:

Սա շատ լավ հնարավորություն էր մեզ համար շփվելու Հյուսիս-Կովկասյան դաշնային համալսարանի ուսանողների, ինչպես նաև ՌԴ այլ տարածաշրջանային համալսարանների ուսանողների հետ: Մեզ համար սա հնարավորություն էր՝ ներկայացնելու հայ պատմաբանի դիրքորոշումը Կովկասում տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ:

Այս տարի լրանում է Գեորգիևյան դաշնագրի ստորագրման 240-ամյակը: Այսօր այն դառնում է քաղաքական շահարկումների գործիք: Ուստի Կովկասյան լեռնաշղթայի երկու կողմերում գտնվող երկրների ներկայացուցիչները փնտրում են գրեթե կորցրած բարիդրացիական հարաբերությունների վերականգնման նոր ուղիներ:

Մասնակիցներից շատերն առաջին անգամ էին Ստավրոպոլում, ուստի, բացի դասախոսություններից, մեզ համար կազմակերպվեցին էքսկուրսիաներ դեպի Ստավրոպոլի պատմական վայրեր: Հավելենք, որ էքսկուրսիայի ծրագրում ներառված էին Հայաստանի, Ռուսաստանի և Վրաստանի մշակույթների հետ կապված վայրեր:

Ֆելիքս ԲԱԽՉԻՆՅԱՆ
Պատմության և հասարակագիտության ֆակուլտետ 3-րդ կուրս

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՊՄՀ արհեստակցական կազմակերպությունը բուհի արհմիութենականների և նրանց ընտանիքների անդամների համար նախատեսում է օգոստոսի 12-19-ը Աղավնաձորի ուսումնական բազայում կազմակերպել «Ամառային հանգիստ 2023» ծրագիրը:

Մասնակցության պայմանները (ներառյալ տեղափոխումը, սնունդը և գիշերակացը)

1. Արհմիության անդամի համար մասնակցության արժեքը մեկ օրվա համար 7000 դրամ է, իսկ ծախսերի մնացած մասը կհոգա արհմիությունը:
2. Ընտանիքի անդամների համար՝ 10 000 դրամ
3. Մինչև 3 տարեկան երեխաների համար մասնակցությունն անվճար է, իսկ 4-12 տարեկաններին համար ՝ 5000 դրամ՝ 50% զեղչով
4. Մասնակիցների տեղափոխման նպատակով ավտոբուսը Երևանից Աղավնաձոր մեկնելու է օգոստոսի 12-ին, ժամը 10.00-ին, իսկ վերադարձը Երևան՝ տեղի կունենա օգոստոսի 19-ին, ժամը 11.00-ին:

Ծրագրին մասնակցելու համար դիմել ՀՊՄՀ արհկոմիտե (ՀՊՄՀ 1-ին մասնաշենք, 111 սենյակ) կամ զանգահարել (010) 59 70 57, (094) 99 55 26 հեռախոսահամարներին մինչև օգստոսի 8-ը ժամը 17.00:

Վճարումները կատարել ՀՊՄՀ արհեստակցական կազմակերպության Արարատ բանկի 1510004143430100 հաշվեհամարին, նպատակ դաշտում նշելով ,Ամառային հանգիստ 2023ե ծրագիր:

ՀՊՄՀ Արհկոմիտե



ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

2023-2024 ուսումնական տարվա ասպիրանտուրայի հեռակա ընդունելություն

1. Մանկավարժության տեսություն և պատմություն - ԺԳ.00.01 (1 տեղ)
2. Սոցիալական հոգեբանություն - ԺԹ.00.03 (1 տեղ)

Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1. Ասպիրանտուրա ընդունվելու համար տրվում է դիմում հաստատության ղեկավարի անունով՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

1) բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի ու դրանց հավելվածների պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),

2) օտար լեզվի ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ),

3) ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում,

4) անձնագրի և սոցիալական քարտի պատճենները,

5) ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3x4 չափսի),

6) քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):

2. Ստորև նշված օտար լեզուներից որևէ մեկից ստացած անհրաժեշտ նվազագույն միավոր է համարվում՝

1) անգլերենից՝ «TOEFL» (iBT) (այԲիԹի)՝ 46 և «IELTS» (ԱՅԼԹՍ)՝ 5.5 միավորը,
2) ֆրանսերենից՝ «TCF» (ԹիՍիէՖ)՝ 200 միավորը,
3) գերմաներենից՝ «on DaF» (օն ԴաՖ)՝ 60 միավորը:

Փաստաթղթերն ընդունվում են ս.թ. օգոստոսի 22-ից մինչև սեպտեմբերի 07-ը (ներառյալ):

Ընդունելության մասնագիտական քննությունները կազմակերպվում են ս.թ. սեպտեմբերի 11-ից 14-ը (ներառյալ):

Տեղեկությունների համար դիմել հետևյալ հասցեով՝ Երևան, Տիգրան Մեծի 17, 2-րդ հարկ, Գիտահետազոտական կենտրոն, հեռ՝. 59-70-29:

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում օգոստոսի 11-ին կմեկնարկի Պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների 2023 թվականի վերապատրաստումը: Վերապատրաստումն իրականացվելու է ներքոնշյալ 19 առարկաների գծով.

1. Տարրական դասարաններ («Մաթեմատիկա», «Մայրենի» և «Ես և շրջակա աշխարհը» առարկաներ)
2. Հայոց լեզու և գրականություն
3. Օտար լեզու (անգլերեն)
4. Օտար լեզու (ռուսերեն)
5. Օտար լեզու (ֆրանսերեն)
6. Օտար լեզու (գերմաներեն)
7. Հայոց պատմություն և Համաշխարհային պատմություն
8. Աշխարհագրություն
9. Հասարակագիտություն
10. Տեխնոլոգիա
11. Ինֆորմատիկա
12. Մաթեմատիկա
13. Ֆիզիկա
14. Քիմիա
15. Կենսաբանություն
16. Կերպարվեստ
17. Նախնական զինվորական պատրաստություն
18. Երաժշտություն
19. Շախմատ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ